Տեղեկատվական նշումներ
Աշխատաժողով

Ազգային խորհրդակցություն Հայաստանի Հանրապետությունում փոքր ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառավարման և ջրի և ջրահեռացման հավասարաչափ մատչելիության գնահատման գործընթացի մեկնարկի վերաբերյալ

Երևան, 15 դեկտեմբերի 2015 թ.
<<Ռեժանս>> հյուրանոցային համալիր

Նախապատմություն

Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է Միավորված ազգերի կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿ-ի ԵՏՀ) և Առողջապահության համաշխարհային կազմակերպության եվրոպական տարածաշրջանային գրասենյակի (ԱՀԿ / Եվրոպա) «Ջրի և առողջության մասին» արձանագրության (այսուհետ՝ «արձանագրության») ստորագրյալ կողմ: Հայաստանի Հանրապետությունն ակտիվ ներգրավվածություն է ունեցել արձանագրության շրջանակում իրականացվող բազմաթիվ միջոցառումներին՝ արձանագրությանը միանալու համար նախապատրաստվելու և արձանագրության դրույթների համաձայն թիրախների նախագծերը մշակելու ընթացքում:

Արձանագրության նպատակն է պաշտպանել մարդկանց առողջությունը և բարեկեցությունը՝ ջրի կայուն կառավարումը կապելով ջրի հետ կապված հիվանդությունների կանխարգելման, նվազեցման և վերահսկման հետ: Արձանագրության հիմնական նպատակներից մեկը բոլորի համար անվտանգ խմելու ջրի և ջրահեռացման ապահովումն է: Արձանագրության ներքո 2014-2016 թթ. աշխատանքային ծրագիրը առանցքային ուշադրություն է հատկացնում հասարակության բոլոր անդամների, այդ թվում գյուղական վայրերում ապրող աղքատ, խոցելի և սոցիալապես մեկուսացված մարդկանց համար ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների հավասար հասանելիության խթանմանը, ինչպես նաև փոքր ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառավարման և վերահսկողության բարելավման գործում երկրներին օժանդակության ցուցաբերմանը:

Ջրի և առողջության հարցերով աշխատանքային խմբի 7-րդ հանդիպման ժամանակ (Ժնև, 26-27 նոյեմբերի 2014 թ.) Հայաստանի Հանրապետությունը հաստատել է ջրամատակարարման և ջրահեռացման հավասար մատչելիության ինքնագնահատման գործընթացում ներգրավվելու հանդեպ իր հետաքրքրությունը՝ օգտագործելով ջրի և ջրահեռացման հավասարաչափ մատչելիության ինքնագնահատման քարտը և օժանդակություն ստանալու խնդրանքով դիմել է արձանագրության քարտուղարությանը:

Ի պատասխան այս խնդրանքի, և գյուղական բնակավայրերում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների ընթացիկ պայմաններին անդրադառնալու համար, քարտուղարությունն առաջարկել է կազմակերպել ազգային խորհրդակցական աշխատաժողով՝ ջրի և ջրահեռացման հավասար մատչելիության ինքնագնահատման գործընթացի մեկնարկի տրման և փոքրածավալ ջրամատակարարման և ջրահեռացման կառավարման և հսկողության հետ կապված մարտահրավերների և բարեկարգման կարիքների բացահայտման համար: Սեմինարի կազմակերպմանը հաջորդելու է ջրային ռեսուրսների կառավարման հարցերով ազգային քաղաքականության երկխոսության ղեկավար հանձնախմբի 14-րդ հանդիպումը (Երևան, 14 դեկտեմբերի 2015 թ.):

Նպատակային խնդիրները

Մաս I. Խորհրդակցություն փոքրածավալ ջրամատակարարման և ջրահեռացման վերաբերյալ

Այս խորհրդակցության նպատակն է՝ վերանայել երկրում փոքր ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների իրավիճակը և բացահայտել այդ համակարգերին առնչվող կոնկրետ մարտահրավերները: Այսպիսով, խորհրդակցությունը կտրամադրի գաղափարներ, որոնք կնպաստեն փոքր համակարգերի իրավիճակի բարելավման և կառավարման ու վերահսկողության ուժեղացման ուղղությամբ հետագա գործողությունների նախաձեռնմանը, ներառյալ արձանագրության ներքո հնարավոր թիրախների սահմանումը:

Խորհրդակցությունն, ի թիվս այլ հարցերի, կքննարկի հետևյալ հարցերը՝

- վերանայել Հայաստանի Հանրապետությունում փոքր ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերում տիրող իրավիճակի մասին առկա ապացույցները և տեղեկությունները,
- բացահայտել գիտելիքների / տվյալների բացերը, որոնք խանգարում են իրավիճակի և հնարավոր առողջապահական ռիսկերի գնահատմանը,
- վերանայել կարգավորող պահանջները և ինստիտուցիոնալ պարտականությունները՝ կապված հանրային առողջության և ջրի

որակի վերահսկողության (այսինքն մոնիթորինգի և վերահսկողության) հետ, մասնավորապես, փոքր համակարգերի համար,
- քննարկել հատուկ մարտահրավերները, որոնք առնչվում են փոքր ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին, ինչպես նաև այս հարցերի լուծման համար կառավարության հնարավորությունները,
- վերանայել գոյություն ունեցող և / կամ նախատեսվող քաղաքականությունը, ծրագրերը և / կամ նախաձեռնությունները, որոնց նպատակն է բարելավել փոքր ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի իրավիճակը,
- ներկայացնել արձանագրության շրջանակում նպատակների սահմանման գործընթացը և քննարկել փոքր համակարգերի՝ որպես թիրախային ոլորտի արդիականությունը:

Հետևյալ հարցերը պետք է ուղղորդեն վարողին աշխատաժողովի ժամանակ:

1. Հայաստանի Հանրապետությունում փոքր ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների իրավիճակը համարվու՞մ է արդյոք հանրային առողջապահական խնդիր:
2. Որո՞նք են Հայաստանի Հանրապետությունում փոքր ջրամատակարարման համակարգերի կառավարման և վերահսկողության հետ կապված հիմնական խնդիրները և մարտահրավերները:
3. Ի՞նչ հնարավոր գործողություններ և աջակցության այլ միջոցներ պետք է իրականացվեն երկրում՝ կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարներում այդ մարտահրավերներին անդրադառնալու համար:

Մաս II. Ջրամատակարարման և ջրահեռացման հավասար մատչելիության ինքնագնահատման գործընթացի մեկնարկը

Հավասար մատչելիության քարտը վերլուծական գործիք է, որի մշակումը նպատակ ունի օգնել կառավարություններին և այլ շահագրգիռ կողմերին՝ հաստատելու ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ելակետային չափանիշները, բացահայտել հարակից առաջնահերթությունները և քննարկել ինքնագնահատման գործընթացի միջոցով ձեռնարկվելիք հետագա գործողությունները:

Աշխատաժողովը հնարավորություն կտա՝
- բարձրացնել ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման անհրաժեշտության մասին իրազեկվածությունը և աստիճանաբար իրականացնել ջրամատակարարման և ջրահեռացման նկատմամբ մարդու իրավունքը,

- բացատրել ինքնագնահատման գործընթացի նպատակները և ակնկալվող արդյունքները՝ կիրառելով հավասար մատչելիության ինքնագնահատման քարտը,
- ներկայացնել հավասար հասանելիության ինքնագնահատման գործընթացի քայլերը և այլ երկրներում հավասար հասանելիության ինքնագնահատման քարտի կիրառման գործում ձեռք բերված փորձը և քաղված դասերը,
- օգնել բացահայտել շահագրգիռ կողմերի լայն շրջանակը, որոնք ունեն այս գործընթացում փորձի և գիտելիքների փոխանակման հմտություններ,
- քննարկել և համաձայնության գալ երկրի կողմից իրականացման գործընթացի, այդ թվում, տեղեկատվական աղբյուրների նույնականացման, առանցքային շահագրգիռ կողմերի դերակատարության և գնահատման աշխատանքի ժամանակացույցի շուրջ:

Գործընկերներ

Աշխատաժողովը գումարվում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և ՄԱԿ-ի ԵՏՀ-ի և ԱՀԿ / եվրոպական տարածաշրջանային գրասենյակի արձանագրության քարտուղարության կողմից: Աշխատաժողովի կազմակերպմանն աջակցում է <<Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> հասարակական կազմակերպությունը:

Հանդիպումը կազմակերպվում է Միավորված ազգերի կազմակերպության հաշվի <<Կառավարությունների և ջրային համակարգի օպերատորների կարողությունների հզորացում՝ եվրոպական տնտեսական հանձնաժողովի տարածաշրջանի անցումային տնտեսությամբ երկրներում ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման նպատակով՝ կենտրոնանալով գյուղական բնակավայրերում փոքր ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վրա>> ծրագրի շրջանակում, որը համատեղ իրականացնում են ՄԱԿ-ի ԵՏՀ-ն և ԱՀԿ / եվրոպական տարածաշրջանային գրասենյակը՝ Ֆրանսիայի առողջապահության, սոցիալական հարցերի և կանանց իրավունքների նախարարության ֆինանսավորմամբ:

Առանցքային շահագրգիռ կողմերը

Երկու թեմատիկ ոլորտների համար պետք է ներգրավված լինեն հետևյալ շահագրգիռ կողմերը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության, բնապահպանության, գյուղատնտեսության, էկոնոմիկայի, աշխատանքի և սոցիալական հարցերի, քաղաքաշինության, ֆինանսների, արդարադատության, տրանսպորտի և կապի, էներգետիկայի և բնական պաշարների, տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունները, ջրային տնտեսության պետական կոմիտեն, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը, Կարմիր Խաչի ընկերությունը, սպառողների իրավունքների պաշտպանության ասոցիացիան, տեղական ինքնակառավարման մարմինները, շրջակա միջավայրի, գենդերային հավասարության, առողջության և մարդու իրավունքների ոլորտներում ներգրավված համապատասխան ՀԿ-ները, գյուղական վայրերում և փոքր քաղաքներում ջրամատակարարման և ջրահեռացման փոքր համակարգերը սպասարկող ջրամատակարարման և ջրահեռացման օպերատորները և / կամ համապատասխան ասոցիացիաները (որոնց գործունեության առանցքը կազմում են գյուղական վայրերը), դոնորների, համագործակցության մարմինների, միջազգային կազմակերպությունների և այլ համապատասխան կազմակերպությունների և գործընկերների ներկայացուցիչները:

Աշխատանքի կազմակերպում

Աշխատաժողովը տեղի կունենա 2015թ. դեկտեմբերի 15-ին, ժամը՝ 9:00 – 17:30:

Զեկույցները և ինտերակտիվ քննարկումները հնարավորություն կստեղծեն փորձի փոխանակման համար:

Իրականացման վայրը

Հանդիպումը տեղի կունենա <<Ռեժանս>> հյուրանոցային համալիրում, հասցե՝ Դավիթ Անհաղթի 10/1:

Գործնական մասի վերաբերյալ

Խորհրդակցության աշխատանքային լեզուներն են անգլերենը և հայերենը: Ապահովվում է համաժամանակյա թարգմանություն, ճաշի և սուրճի ընդմիջումներ:

Մասնակիցների գրանցումը տեղի կունենա 9:00 - 9:30-ին, հյուրասիրությունը կկատարվի խորհրդակցությունների սրահի դիմացի տարածքում:

Հետադարձ կապ

Էմմա Անախասյան, <<Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> ՀԿ, office@awhhe.am, հեռ.՝ (+374 10) 52 36 04

Արմինե Առուշանյան, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, arushanyanarmine@list.ru, +374 10 54 72 83

Հանդիպման վեբ էջ՝ www.unece.org/Workshop_Protocol_Armenia_2015